# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

<<21>> փետրվարի 2017թ. N 95 - Ա

ք. Արմավիր

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 4-Ի N 140-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով և ի կատարումն <<<<Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի պահանջների.

**ո ր ո շ ու մ ե մ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2014 թվականի հուլիսի 4-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության բարձրագույն, գլխավոր պաշտոնների խմբի 1-ին ենթախմբի պաշտոններ զբաղեցնող և ներքին աուդիտի բաժնի քաղաքացիական ծառայողների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 140-Ա որոշման հավելված 1-ում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, և դրա գործողությունը տարածվում է 2017 թվականի փետրվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2017 թվականի փետրվարի 21-ի
N 95 - Ա որոշման

# ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

**Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության բարձրագույն և գլխավոր պաշտոնների խմբի 1-ին ենթախմբի պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների**

| հ/հ | Անուն, ազգանուն | Պաշտոնի անվանումը | Պաշտոնի ծածկա-գիրը | Տվյալ պաշտոնում աշխա-տանքային ստաժը | Բազային աշխատավարձի ճկատմամբ գործակիցը | 2017թ. Փետրվարի 1-ից սահմանվող պաշտոնային դրույքաչափը | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | հիմնական /բազ. գործակցի արտ.6x66140 դրամ/ | առավել. դասային աստիճան /5%/ | ընդամենը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Փառանձեմ Կարապետյան Սարենի | ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար | 63-1.1-1 | 16տ.+ | 9,33 | 617086 | 30854 | 647941 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ф.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ